ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ձեր 05.06.2023թ. թիվ ՎԳ/17/12849-2023 գրությանը.

Հարգելի տիկին Գրիգորյան

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում քննարկվել են Ստեփանավան քաղաքի բնակիչ Դիանա Մովսեսյանի դիմումում բարձրացված հարցերը իր որդուն՝ Նարեկ Մովսեսյանին «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժի կողմից առողջության մասին տեղեկանք չտրամադրելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Առդիր 1 էլ. ֆայլ:

07/06/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Կատ. Ռ. Պողոսյան
/0322/ 2-33-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ » ՓԲԸ
✉ 1901 ՀՀ,ք.Ստեփանավան,
Սուրբ Վարդանի 1
☎ (+374256) 22228 ; 23228 ; 22132

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗ ЛОРИ
"СТЕПАНАВАНИ
БЖШКАКАН
КЕНТРОН " ЗАО
✉ 1901 РА, г.Степанаван,
ул. Сурб Вардани 1
☎ (+374256) 22228 ; 23228 ; 22132

23-110

<<06>> հունիսի 2023թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված դիմում-բողոքի կապակցությամբ հայտնում եմ հետևյալը: <<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի մանկաբույժ Հասմիկ Սիմոնի Մուրադյանը հետևյալ բովանդակությամբ բացատրություն է տվել. Նարեկ Մովսեսյանը՝ ծնվ. 26.08.2011թ.-ին հաշվառված է Ստեփանավանի ԲԿ-ում: Երեխան մինչև 1 տարեկան հասակը ստացել է հնգավալենտ պատվաստանյութ, որից հետո հետպատվաստումային անբարեհաջող դեպք չի արձանագրվել: 18 ամսականում երեխան չի պատվաստվել պատվաստումների ազգային օրացույցով նախատեսված տետրաքսիմ պատվաստանյութով, իսկ 6 տարեկանում՝ տետրաքսիմ և ԿԿԽ պատվաստանյութերով: Երեխայի մայրը բանավոր հրաժարվել է նշված պատվաստումներից, սակայն գրավոր հրաժարական չի ներկայացրել:

Ներկայումս մայրը դիմել է մանկաբույժին Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոցի ֆուտբոլի թիմում երեխային ընդգրկելու կապակցությամբ առողջության մասին տեղեկանք ստանալու նպատակով: Մանկաբույժի կողմից նրան բացատրվել է, որ ֆուտբոլի թիմում երեխաները պարապմունքներ են անցկացնում ինչպես դահլիճում, այնպես էլ դաշտում և երեխայի՝ փայտացումով վարակվելու հավանականությունը կտրուկ մեծանում է: Բացի այդ, մեծ է կարմրուկով հիվանդանալու ռիսկը, քանի որ վերջին ամիսներին հանրապետությունում նկատվել է կարմրուկով հիվանդացության դեպքերի աճ: Մանկաբույժը երեխայի մորը հորդորել և առաջարկել է չհրաժարվել նշված պատվաստումներից, քանի որ ինքն իրավունք չունի առանց պատվաստումների տեղեկանք տրամադրել, սակայն մայրը լսել իսկ չի ցանկացել դրա մասին, և կրկին չի ցանկացել գրավոր հրաժարական ներկայացնել:

<<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի
տնօրեն Ա. Իսպիրյան